ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/12123-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-205-22.03.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 394-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-205-22.03.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետև՝ նախագիծ) նախատեսվում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերականգնման կարգը նախատեսող՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 14-րդ հոդվածում՝ հիշյալ ընթացակարգը պարզեցնելու նպատակով նախատեսելով քաղաքացիության վերականգնման հիմքերի, այդ հարցը լուծող սուբյեկտների և ժամկետների վերաբերյալ նոր կարգավորումներ: Մասնավորապես՝ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու կամ քաղաքացիության վերականգնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունելու լիազորությունը վերապահել՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններին՝ ԱԱԾ-ի կողմից տրամադրված դրական եզրակացության հիման վրա:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունման նպատակը նախկինում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց ՀՀ քաղաքացիության վերականգնման ընթացակարգի պարզեցումն է: Բացի այդ՝ հիմնավորմամբ նշվում է նաև, որ Սահմանադրության 134-րդ հոդվածով սահմանված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը օրենքով կարգավորելու հնարավորություն:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած անձի քաղաքացիությունն իր դիմումի համաձայն կարող է վերականգնվել, եթե բացակայում են սույն օրենքի 13-րդ հոդվածի յոթերորդ մասով սահմանված հիմքերը, և եթե նրա քաղաքացիությունը չի դադարեցվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

Օրենքի սույն հոդվածի վերլուծության արդյունքում հարկ է նշել, որ օրենսդիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած անձին տվել է քաղաքացիություն ստանալու համար կրկին դիմելու իրավունք, ինչն էլ ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու համար քաղաքացին պետք է դիմի քաղաքացիություն ստանալու համար և անցնի նույն ընթացակարգով: Նշված տրամաբանությունն ինքնանպատակ չէ և կոչված է ապահովելու ՀՀ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրություն և լուծում՝ իրավասու մարմիններից ստացված ամփոփ եզրակացությունների հաստատման միջոցով:

Հարկ է նշել, որ Սահմանադրության 134-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:

Օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով:

Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան և սույն օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով, լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:

Սահմանադրության 134-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքերն ու կարգը սահմանվում են օրենքով, սակայն Սահմանադրության հիշյալ հոդվածով ամրագրված է, որ հիշյալ հարցերի լուծումը Հայաստանի Հանրապետության նախագահի բացառիկ սահմանադրական լիազորությունն է, որը սահմանված է նաև օրենքի 26-րդ հոդվածով:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-4-րդ մասերով հստակ սահմանված են քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման կարգը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դիմումի ներկայացման և դրանց հետագա քննարկման ընթացակարգը:

Օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-րդ N 1390-Ն որոշմամբ:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ օրենքի 27-րդ հոդվածի կիրարկման նպատակով ընդունվել և գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-իդ N 1390-Ն որոշումը, որով սահմանված է հիշյալ դիմումի քննարկման ընթացակարգը, որը կոչված է ապահովելու օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ սահմանված մերժման հիմքերի առկայության կամ բացակայության հարցի ողջամիտ լուծում՝ համապատասխան լիազոր մարմինների կողմից եզրակացությունների տրամադրման և դրանց լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության միջոցով:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ հայտնում ենք հետևյալը:

1. Օրենքի նախագծի ընդունումը խնդրահարույց է հեղինակի ներկայացրած՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 14-րդ հոդվածի մեկնաբանման տեսանկյունից:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու (այդ թվում՝ վերականգնելու) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը ենթակա են լուծման ՀՀ նախագահի կողմից և հանդիսանում են նրա բացառիկ սահմանադրական լիազորությունը, ուստի հարկ է նշել, որ քաղաքացիության շնորհման դեպքերի և ընթացակարգի ցանկացած փոփոխության պարագայում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է շնորհվել բացառապես ՀՀ նախագահի հրամանագրով:

3. Գործող օրենքի 27-րդ հոդվածով և կարգով սահմանված կարգավորումները ինքնանպատակ չեն և կոչված են ապահովելու ՀՀ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրություն և լուծում՝ իրավասու մարմիններից ստացված ամփոփ եզրակացությունների հաստատման միջոցով:

4. ՀՀ քաղաքացիությունը վերականգնելու վերաբերյալ որոշման ընդունումը, միայն ԱԱԾ-ի կողմից տրված դրական եզրակացությամբ պայմանավորելը խնդրահարույց է, և տվյալ պարագայում ամբողջությամբ չի ապահովվի օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժման տարբեր հիմքերի առանձնակի պարզաբանումը: Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով քաղաքացիությունը դադարեցնելը, անկախ Ազգային անվտանգության ծարայության դրական եզրակացությունից, արդեն իսկ բավարար է ՀՀ քաղաքացիությունը վերականգնելը մերժելու համար, քանի որ այն նախկինում ձեռք է բերվել կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա:

5. Բացի այդ՝ նախագծով առաջարկվում է սահմանել դիմումի վերականգման հստակ ժամկետ, այն է՝ դիմումը լիազոր մարմնի կողմից ստանալուց հետո մեկամսյա ժամկետում, մինչդեռ հարկ է նշել, որ կարգի դրույթներով սահմանված են եզրակացությունների տրամադրման ժամկետներ՝ օրենքով սահմանված առանձին փաստերի ստուգման համար, իսկ կարգի 21-րդ կետով նաև նախատեսված է կարգավորում, համաձայն որի՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքերում Ազգային անվտանգության ծառայությունը եզրակացությունը ներկայացնելու ժամկետը կարող է երկարաձգել մինչև 15 օրով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծով նախատեսվող՝ քաղաքացիության վերականգնման իրականացման համար դիմումը լիազոր մարմնի կողմից ստանալուց հետո 1-ամսյա ժամկետի սահմանումը ողջամիտ չէ, քանի որ տարաբնույթ իրավիճակներով պայմանավորված՝ հնարավոր են դեպքեր, երբ եզրա-կացությունների քննարկման և ամփոփ եզրակացության տրամադրման համար լիազոր մարմիններից պահանջվի ավելի երկար ողջամիտ ժամկետ: Մասնավորապես՝ նախագծով սահմանվում են 5-օրյա ժամկետներ՝ համապատասխանաբար քաղաքացիությունը վերականգնելու դիմումը Ազգային անվտանգության ծառայություն ուղարկելու և Ազգային անվտանգության ծառայության եզրակացությունը ստանալուց հետո որոշում կայացնելու համար, ինչը պրակտիկայում հնարավոր չէ ապահովել: Հարկ է նշել, որ միայն անձի դիմումը բավարար չէ վարույթի նյութերն ամբողջական համարելու համար, քանի որ ինչպես արդեն նշվեց, դիմումի քննարկման ընթացքում կարող է առաջանալ լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու, ստուգումներ կատարելու անհրաժեշտություն, ուստի նշված ժամկետը ևս պետք է վերանայվի, ինչպես նաև հաշվարկվի աշխատանքային օրերով:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ բարձրացված խնդիրների համա-տեքստում՝ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ նախագծի ընդունումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի N 394 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-205-22.03.2022-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի 14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 14. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելն եւ դրա կարգը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված կարգով եւ դիմումը լիազոր մարմնի կողմից ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

2. Անկախ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու հանգամանքից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած անձի քաղաքացիությունն, իր դիմումի համաձայն, կարող է վերականգնվել, եթե բացակայում են սույն օրենքի 13 հոդվածի յոթերորդ մասով սահմանված հիմքերը, եւ եթե նրա քաղաքացիությունը չի դադարեցվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

3. Սույն հոդվածով սահմանված դեպքերում ՀՀ քաղաքացիությունը վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

4. Ստացված դիմումը ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում պետք է ուղարկվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն՝ քսանօրյա ժամկետում եզրակացության տրամադրման նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության եզրակացությունն ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու կամ քաղաքացիության վերականգնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինները:

Ընդ որում՝ քաղաքացիությունը վերականգնելու վերաբերյալ դիմումը չի կարող մերժվել, եթե դիմողի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրվել է դրական եզրակացություն:»

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Առկա իրավիճակը

ՀՀ քաղաքացիության վերականգնումը ՀՀ քաղաքացիություն ձեռքբերելու եղանակներից մեկն է: Սա այն դեպքն է, երբ անձը ունենալով ՀՀ քաղաքացիություն, դադարեցրել եւ կամ ստացել է այլ պետության քաղաքացիություն կամ մերժվել է այլ պետության քաղաքացիություն տրամադրումը:

Իրավակիրառ պրակտիկայում շատ են դեպքերը, երբ անձինք կրկին ցանկանում են վերականգնել ՀՀ քաղաքացիությունը, սակայն իմանալով, որ անցնելու են նույն պրոցեսով, ինչ ՀՀ քաղաքացիություն առաջին անգամ ստացողները, չեն դիմում այդ քայլին:

Խնդիրը կայանում է նրանում, որ քաղաքացիության վերականգումը իրականացվում է քաղաքացիություն ստանալու ընթացակարգի անալոգիայով, ինչը մի կողմից արժեզրկում է քաղաքացիության վերականգման ինստիտուտը եւ հանգեցնում է դրա քիչ կիրառման, մյուս կողմից չի պահպանում քաղաքացիության վերականգման եւ այն ստանալու միջեւ առկա էական բովանդակային եւ իրավական տարբերությունների փաստացի արտացոլումը իրավակիրառ պրակտիկայում:

Սրանով պայմանավորված սույն օրենքի նախագծով առաջարկվում է քաղաքացիության վերականգման դեպքում գործը վարչապետի միջոցով չուղարկել նախագահին, այլ ԱԱԾ կողմից համապատասխան եզրակացություն ստանալուց հետո ԱՎՎ պետի կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտով վերականգնել անձի քաղաքացիությունը:

Նախագծի ընդունումը կտա հնարավորություն առավել պարզեցված կարգով տրամադրել ՀՀ քաղաքացիություն այն անձանց, ովքեր նախկինում հանդիսացել են ՀՀ քաղաքացի, ընդ որում՝ նախագծով առաջարկվող կարգավորումը չի հակասում ՀՀ Սահմանադրության պահանջներին:

ՀՀ Սահմանադրության նախկին տարբերակի համաձայն ՀՀ քաղաքացիության շնորհումը ՀՀ նախագահի բացառիկ լիազորությունն էր: ՀՀ Սահմանադրության գործող խմբագրության 134-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:

Նախ, Սահմանադրությամբ սահմանված է իրավական հնարավորություն խնդիրը կարգավորել օրենքով, մասնավորապես՝ որոշել ՀՀ քաղաքացիություն շնորհելու դեպքերը:

Բացի այդ, «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 9-րդ, 13-րդ 14-րդ հոդվածներով հստակ տարանջատված են ՀՀ քաղաքացիություն ստանալու (շնորհելու՝ 13-րդ հոդված) եւ վերականգնելու ինստիտուտները, որոնք տարբեր գործընթացներ են: Քանի որ վերականգման համար օրենքով հստակ կանոնակարգումներ չկան, պրակտիկայում այն իրականացվում է 13-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիություն ստանալու ընթացակարգով: Ընդունվում են փաստաթղթերը, ստուգումներ

իրականցնելուց հետո ուղարկվող քաղաքացիության հարցերով հանձնաժողով, այնուհետեւ ՀՀ վարչապետին,որից հետո ՀՀ նախագահի աշխատակազմ:

Քաղաքացիություն ստանալու եւ այն վերականգնելու տարբերությունը ապացուցվում է նաեւ այն փաստով, որ «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»

Նախագծով առաջարկվող կարգավորումը.

Նախագծով առաջարկվում է պարզեցնել ՀՀ քաղաքացիության վերականգնման գործընթացը՝ դրանով իսկ լուծելով առկա իրավական բացով պայմանավորված խնդիրները եւ նպաստել՝ նախկինում ՀՀ քաղաքացիության ունեցող անձանց կողմից ՀՀ քաղաքացիության վերականգմանը առավել պարզ ու արդյունավետ տարբերակով: